ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 61-Ա

« 09 » դեկտեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.44-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2014 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 02.2/14/5641-14 գրությամբ ներկայացված առաջարկությունները՝ Մարալիկի քաղաքային համայնքում 2014 թվականի սեպտեմբեր ամսին իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու մասին

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Ամբողջությամբ ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Մարալիկի քաղաքային համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2014 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՎՀ-28 արձանագրությանը կից թիվ թիվ 1-10 հավելվածներում նշված խախտումները:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2014 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՎՀ-28 արձանագրությանը կից թիվ թիվ 1-10 հավելվածներում նշված խախտումները վերացնելու վերաբերյալ միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Մարալիկի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանին՝
   Սույն որոշմամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցին համապատասխան միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Մարալիկի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյանի վրա:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
09 դեկտեմբերի 2014 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի
ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 9-ի
թիվ 61-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Ց Ց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքում 2014 թվականի սեպտեմբեր ամսին իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2014 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՎՀ-28 արձանագրությանը կից թիվ թիվ 1-10 հավելվածներով ներկայացված խախտումները վերացնելու միջոցառումների

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարման պատասխանատուն
1	2	3
Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ		
ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ համայնքի 2011-2015թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ներառված ծրագրային երկու աշխատանքների կատարումն ամբողջությամբ ապահովել	Զարգացման ծրագրով նախատեսված ժամկետներում	Համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
2. Համայնքի բյուջեներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումները համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են՝ բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոփոխարինելու միջոցով, բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով, բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով:	20 դեկտեմբերի 2014	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
3. <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին,համաձայն որի Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի,դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվել: Ապահովել ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթի պահանջը, համաձայն որի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում որոշման մեջ պետք է նշվեն հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը,հողատեսքը,գործառնական նշանակությունը:	մինչև 20 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
4.ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը հաստատելու հետ միաժամանակ մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:	ՀՀ օրենսդրու-թյամբ սահմանված ժամկետում	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
5.ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի համաձայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:	Մշտապես	ավագանի, համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
7. ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետի համաձայն մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը:	մինչև 20 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
8. ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասի,	մինչև	

10.2-րդ կետերի համաձայն մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը:	20 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
9. Ավագանու կանոնակարգի 71-րդ կետի համաձայն աշխատակազմում հաշվառում տանել ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ: Եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին տեղեկանք տրամադրվել նախորդ նիստերից կամ քվեարկություններից իրենց բացակայության մասին: Ավագանու նիստերի արձանագրություններում համապատասխան նշում կատարել նիստից ավագանու անդամի բացակայության պատճառի մասին (հարգելի, անհարգելի):	մշտապես	Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ք. Մկոյան
10.ՏԻՄ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում ստեղծել մշտական հանձնաժողովներ և ապահովվել ավագնու անդամների որևէ մշտական հանձնաժողովի անդամակցությունը:	մինչև 20 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
11. ՏԻՄ օրենքի 12.1-րդ հոդվածի համաձայն ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքում առկա ցուցատախտակին հայտարարություն փակցնելու միջոցով ապահովել համայնքի բնակչության համար տեղեկության հրապարակումը՝ ավագանու նիստի ժամանակի, վայրի և օրակարգի վերաբերյալ:	մշտապես	Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ք. Մկոյան
12.Ապահովվել համայնքի ղեկավարի անհատական ակտերն ընդունելուց հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում ավագանու անդամներին ուղարկելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերը փակցնելու ՏԻՄ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետի պահանջները:	մշտապես	Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ք. Մկոյան
13. ՏԻՄ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի դրույթի համաձայն համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարումն ու օգտագործման տրամադրումը իրականացնել համայնքի ավագանու որոշմամբ և սահմանված պայմաններով: Հողամասերի ընդլայնման համար, հողամասերի ուղղակի վաճառքը կատարել այն դեպքում, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով:	մշտապես	Քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Գ. Գրիգորյան
14. ՏԻՄ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13[1]-րդ կետի համաձայն, ՀՀ կառավարության սահմանած կարգով կազմել համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա և այն ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:	մինչև 20 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
15.Համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման կազմելուց և այն ավագանու կողմից հաստատվելուց հետո, համայնքի ղեկավարի կողմից որոշում ընդունել անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ:	սխեման կազմելուց և այն ավագանու կողմից հաստատվելուց հետո 10 օրյա ժամկետում	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
16. <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվել : Համայնքի ղեկավարի որոշումները համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին:	մինչև 20 □□□□□□□□□□□ 2014թվական	Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ք. Մկոյան
17.Օրենքով սահմանված կարգով հանրային լսումներ կամ քննարկումներ իրականացնել տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների , համայնքի գլխավոր	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

հատակագծի ,քաղաքաշինական ,բնապահպանական ,կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ		
18.Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո միշաբաթյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում հաստատել համապատասխան փոփոխություն և այն ներկայացնել ավագանու առաջիկա նիստի հաստատմանը	մշտապես	Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ք. Մկոյան
19. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գործընթացում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համաձայն կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև 3 անդամների բնակիչների փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ համայնքի ղեկավարին կից ստեղծել խորհրդակցական մարմին	մինչև 20 □□□□□□□□□□□ 2014թվական	Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ք. Մկոյան
20.Օրենքով սահմանված կարգով կազմակերպել և հանրային բաց լսումներ ու (կամ) քննարկումներ անցկացնել համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
21.ՏԻՄ օրենքի 69-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն համայնքի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյաներին հաղորդումներ ներկայացրել համայնքի ավագանուն:	Յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
22. «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին թիվ 168 որոշմամբ սահմանված կարգով հաստատել գնումների պլան և հրապարակել, սահմանել գնումների համակարգող ու գնահատող հանձնաժողով:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

Առողջապահության բնագավառ

1. □□ □□□□□□□□□□□□□□□ 2007 □□□□□□□□ □□□□□□□□□□□□ 4-□ N 1161-□ □□□□□□□□ 9-□□ □□□□ □□□□□□□□,□□□□□□□□□ □□□, □□□□□□□□□□□ □□□□ □ □□□□□□□□□ □□□□□□ □□□□□□ □□□□□□□ □□□□□□□□	մինչև 30 □□□□□□□□□□□ □ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
2. □□ □□□□□□□□□□□□□□□ 2007 □□□□□□□□ □□□□□□□□□□□□ 4-□ N 1161-□ □□□□□□□□9-□□ □□□□ □□□□□□□□,□□□□□□□□□ □□□ □□□□□□□□□□□ □□□□ □ □□□□□□□□□ □□□□□□ □□□□□□□□□□□□□:	մինչև 30 □□□□□□□□□□□ □ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
3. □□ □□□□□□□□□□□□□□□ 2007 □□□□□□□□ □□□□□□□□□□□□ 4-□ N 1161-□ □□□□□□□□9-□□ □□□□ □□□□□□□□,□□□□□□□□□ □□□ □□□□□□□□ □□□□ □□□□□□ □□□□ □ □□□□□□□□ □□□□ □ □□□□□□□ □□□□□ □□□□□□□□	մինչև 30 □□□□□□□□□□□ □ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
4. □□ □□□□□□□□□□□□□□□ 2007 □□□□□□□□ □□□□□□□□□□□□ 4-□ N 1161-□ □□□□□□□□9-□□ □□□□ □□□□□□□□,□□□□□□□□□ □□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□ □ □□□□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□ □ □□□□□□□□ □□□□□□□□□□ □ □□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□	մինչև 30 □□□□□□□□□□□ □ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
5. □□ □□-□ 22.12.2009□. □□□ 25-□ □□□□□□□□ 11-□□ □ 12-□□ □□□□□□□ □□□□□□□□□□□, □□□□□□□□□ □□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□ □□□ □□□□ □ □□□□□ □□□□□□ □□□□□□□□□□□□, □□□□□□ 1. □□□□□□□□□□□□□ □□ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□ □□□ □□□□□□□□□□ □□□ □□□□□□□□□□: □□□□□□ □□□□□□□□ □ □□□□□□□□□□□ □□□□□□□ □□□□ □□□□□□□□□□□	մինչև 30 □□□□□□□□□□□ □ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
6. □□ □□-□ 22.12.2009□. □□□ 25-□ □□□□□□□□ 16-□□ □□□□□□□ □□□□□□□□□□□, □□□□□□□□□ □□□ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□ □ □□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□	մինչև 30 □□□□□□□□□□□ □ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

Առևտրի և ծառայությունների բնագավառ

1. Ապրանքների վաճառքի կազմակերպման համար ընդունման,	մինչև 30	համայնքի ղեկավար՝

պահպանման և վաճառքի համար սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, ունենալու պահեստային և ապրանքների վաճառքի նախապատրաստման համար համապատասխան մասրի ապահովեու ուղղությամբ	□□□□□□□□□□□ 2014թվական	Ա. Գևորգյան
2. Համայնքի առևտրի բոլոր օբյեկտները ՀՀ կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով ապահովելու ուղղությամբ	մինչև 30 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
3.Համայնքի առևտրի բոլոր օբյեկտները ՀՀ կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով ապահովելու ուղղությամբ	մինչև 30 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
4. Սննդամթերքի վաճառք իրականացնող առևտրի օբյեկտի աշխատողներին,աշխատանքային արտահագուստով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ապահովելու ուղղությամբ	մինչև 30 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
5.Համայնքի հանրային սննդի բոլոր օբյեկտներն ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան դեպի օբյեկտի մուտք տանող և հետիոտնային ճանապարհներով, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներով և սանհանգույցներով	մինչև 30 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
6. Համայնքի հանրային սննդի բոլոր ՀՀ կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով ապահովելու ուղղությամբ	մինչև 30 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
7. ՀՀ օրենքի պահանջը ապահովելու ուղղությամբ՝ կազմել ճաշացուցակ,որում նշել խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը,որն ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման	մինչև 30 □□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

Քաղաքաշինության բնագավառ

1.ՀՀ կառավարության 23.11.2003թ. N1910-Ն որոշմամբ հաստատված «Գերեզմանատների շահագործման ընդհանուր կանոնների» 9-րդ կետի համաձայն համայնքի գործող գերեզմանատան համար սահմանված կարգով կազմել և հաստատել գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծ (սխեմա):	մինչև 30 □□□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
2. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետով սահմանված կարգով վարել թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյան և տրամադրել գերեզմանի վկայական:	մինչև 30 □□□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան
3. Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատների հատակագծերի և գերեզմանատներից օգտվելու կանոնների առկայությունը ապահովելու ուղղությամբ	մինչև 30 □□□□□□□□□□□□ 2014թվական	համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ